ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/16-2019

„11„ 02 2019թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 364-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրով՝

Որոշում եմ՝

1. 2019 թվականի 1-ին եռամսյակում մարզի Արմաշ, Գինեվետ, Նոր ուղի, Շահումյան, Վարդաշեն, ք.Արարատ և ք.Արտաշատ համայնքներում իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն:

2. Հաստատել իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 364-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրով:

4. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) Ապահովել համայնքի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին հսկողությունը սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրությամբ պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով, կամ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով) տեղեկացումը, որը պարունակում է տեղեկություններ հսկողության իրավական հիմքի, հսկողություն իրականացնող համապատասխան աշխատանքային խմբի, պաշտոնատար անձանց կազմի, բնագավառների, նպատակի, ժամկետների մասին:

2) Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո սահմանված ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

3) Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման արդյունքում կազմված արձանագրությունը, խախտումները վերացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարին ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև հսկողության վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած առարկությունները սահմանված ժամկետում հրապարակել մարզպետարանի ինտերնետային պաշտոնական կայքում:

11.02.2019

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ